ՀՆԱԳՈՒՅՆ ԲՋՆԻՆ
(Նախնական դիտարկումներ)

ԻԳԻԹ ՂԱՐԻԲՅԱՆ, ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ, ԱՐՏԱԿ ԳՆՈՒՆԻ,
ԳԱԳԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ՏԱՏՅԱՆԱ ՎԱՐԴԱՆԵՍՈՎԱ

Միջնադարյան Հայաստանի կենտրոններից մեկը՝ Բջնին, հարուստ է նախաքրիստոնեական շրջանի հուշարձաններով: Բջնի տեղանունն, ըստ Հ. Կարագյոզյանի, Բագունիա *երկիր ձևով հիշատակվում է Սարդուրե Բ-ի Գանձադռան տարեգրության մեջ մ. թ. ա. 741 թ.*[1]*:*

Բջնիում հետախուզական աշխատանքներ դեռևս 1928 թ. կատարել է Ե. Բայբուրթյանը: Գտնվել են շենգավթյան մշակույթին բնորոշ անոթներ, մասնավորապես սև փայլեցված՝ դուրս հակված շուրթերով[2]*: Հայաստանի պատմության պետական թանգարանում պահպանվում են Բջնիից հայտնաբերված մի շարք իրեր: Այսպես, Բջնիից հայտնի է հատույթում կլոր, կլորացված ծայրերով ապարանջան: Նման տիպի ապարանջաններ հայտնի են Գավառից, Նորատուսից, Դաշքեսանից և այլ հնավայրերից, որոնք թվագրվում են մ. թ. ա. II–I հազ. սահմանագլխով*[3]*: Մ. թ. ա. I հազ. սկզբով է թվագրվում սլացիկ իրանով, ուռուցիկ մեջքով, երկայնական ռելիեֆ երակով դաշույնը, որի շեղբն ունի կետազարդ հիմք: Նմանատիպ դաշույններ հայտնի են Կարմիրի տարածաշրջանից (Գեղամի աղբյուրի դամբարանադաշտ)*[4]*: Բջնիում գտնվել են նաև մ. թ. ա. VII–VI դդ. բնորոշ նյութեր՝ մանգաղաձև դանակներ և նիզակի ծայրապանակներ: Հայտնաբերվել են նաև մ. թ. ա. V–IV դդ. բնորոշ ճկվածքով ապարանջաններ*[5]*:*

Բջնիի հնագույն պատմությանն առնչվող բազմաթիվ նյութեր հայտնաբերվել են 2004 թ. այստեղ աշխատանքներ ծավալած Երևանի պետական համալսարան (ԵՊՀ) հնագիտական արշավախմբի կողմից: Մասնավորապես, միջնադարյան ամրոցի տարածքից գտնվել են մ. թ. ա. I դ. բնորոշ սև լաքապատ խեցեղենի բեկորներ, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ միջնադարյան ամրոցի տարածքը բնակեցված էր առնվազն անտիկ շրջանում: Մ. թ. ա. II-I հազ. մետաղագործության բազմաթիվ նմուշներ պահվում են գյուղի

---

[1] *Հ. Կ ա ր ա գ յ ո զ յ ա ն. Մեպագիր տեղանուններ (Այրարատում և հարակից նահանգներում), Երևան, 1998, էջ 132: Գ. Ղափանցյանը՝ կարդալով այդ տեղանունը որպես Բուգունիա, դրա տեղայնացումը Բջնիում համարում է միայն հնարավոր տարբերակներից մեկը, իսկ Ն. Հարությունյանը գտնում է, որ Բուգունիան տեղադրված էր Ախուրյանի վերին հոսանքում՝ Չլդր լճից հարավ-արևելք (տե՛ս Գ. Ղ ա փ ա ն ց յ ա ն. Ուրարտուի պատմություն, Երևան, 1940, էջ 182, ծան. 1,* Н. В. А р у т ю н я н. Топонимика Урарту. Ереван, 1985, с. 59–60)*:*

[2] *Է. Վ. Խ ա ն զ ա դ յ ա ն. Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա. III հազարամյակում, Երևան, 1967, էջ 19, Ս. Հ. Մ ա ր դ ա ր յ ա ն. Հայաստանը քաղաքակրթության օրրան, Երևան, 2005, էջ 359:*

[3] *Է. Վ. Խ ա ն զ ա դ յ ա ն. Էլառ-Դարանի, Երևան, 1979, էջ 91:*

[4] *Նույն տեղում, էջ 101,* С. А. Е с а я н. Древняя культура племен северо-восточной Армении. Ереван, 1979, с. 104.

[5] С. А. Е с а я н. *Նշվ. աշխ., էջ 125-126.*

բնակիչների մոտ: Հատկանշական են պատահական գտնված զանգվածեղ և ատամնավոր ապարանջանների մի քանի նմուշներ: Հնությունների այս տեսականին արդեն իսկ վկայում է, որ Բջնին ունի բավականաչափ կայուն ժամանակագրական շրջանակներ:

Ելնելով հնավայրի համալիր ուսումնասիրության անհրաժեշտությունից՝ 2004–2006 թթ. հետախուզվեց միջնադարյան ամրոցից հարավ Բջնի–Ալափարս և Բջնի–Սոլակ ճանապարհների խաչմերուկին, Բջնի–Ալափարս ճանապարհի ձախ կողմում գտնվող հրվանդանը, որի ստորոտում կա ժամանակակից գերեզմանոց: Հնավայրը գտնվում է Բջնի գյուղից արևելք, Հրազդան գետի ձախ ափին տարածվող չորրորդական դարաշրջանի հրաբխային ծագում ունեցող սարահարթում[6]: Այն իրենից ներկայացնում է դեպի արևելք ձգված եռանկյունաձև բլուր, որի հարավային լանջին և գագաթին առկա են կիկլոպյան շարվածքի հետքեր[7]: Այստեղ աշխատանքները կենտրոնացան բլրի արևելյան ծայրին գտնվող դամբարանում:

Դամբարանը տեղադրված է բլրի կենտրոնական հատվածում՝ կիկլոպյան ամրոցից հյուսիս-արևելք: Հուշարձանի գտնվելու վայրում մայր ապարները կազմված են չորրորդական դարաշրջանի լավային նստվածքների վրա կուտակված վերջիններիս (բազալտային հոսքերի) քայքայման արդյունքներից և գետային նստվածքներից, որոնց կազմում մեծապես առկա են կրաքարերը: Այն իրենից ներկայացնում է 9 մ տրամագծով և 1 մ բարձրությամբ քարահողային դամբանաբլուր: Տեղում կրոմլեխի շրջանագիծը բացակայում էր, սակայն բացառված չէ, որ բլրի պարագծով պահպանված երեք քարերը կրոմլեխի մնացորդներն են: Նշված քարերից մեկի տակ հայտնաբերվեց փոսիկավոր հիմքով վանակատե տերևաձև մի նետասլաք[8]: Նշված նետասլաքն իր զուգահեռներն ունի Էջմիածնի և Վանաձորի դամբարաններից[9]: Դիցաբանական զուգահեռները հուշում են, որ նետասլաքը թաղման ծիսակարգում կարող էր ունենալ կարևոր նշանակություն[10]:

Դամբարանի կառուցվածքը *(աղ. 1):*

Դամբարանի լիցքը բաղկացած է հորիզոնական երեք շարք քարերից: Օգտագործվել են բազալտի ընտանիքին պատկանող քարատեսակներ, ինչպես նաև կրաքար:Խուցն օղակված էր 3մ տրամագիծ ունեցող ներքին կրոմլեխով, որը կառուցված էրբազալտե խոշոր

---

[6] *Երկրաբանական դիտարկումները՝ Գ. Խաչատրյանի:*

[7] *Ի. Ղ ա ր ի բ յ ա ն, Հ. Հ ա կ ո բ յ ա ն. Բջնի հնավայրը (ուսումնասիրության նախնական արդյունքներ).– «Հուշարձան» Գ, Երևան, 2006, էջ 115:*

[8] *Նույն տեղում*

[9] А. А. М а р т и р о с я н. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1964, с. 67–68.

[10] *Մասնավորապես, հին հնդկական ծիսակարգում նետասլաքով էր չափվում զոհաբերության համար նախատեսված հարթակը: Հին հնդկական դիցաբանությունում նետը կատարում էր աստվածային օրենքի պահպանիչի գործառույթներ: Նմանատիպ գործառույթներ նետին վերագրվում էին նաև հին հունական դիցաբանությունում: Օրինակ, «Իլլիականում» նետերն էին Ապոլոնի զենքը, երբ նա պատժում էր փրկագինը վերցնել և Քրիսոս քրմի աղջկան ազատել չցանկացող աքայացիներին:* Ашвалаяна Грихьасутра 1,3.– В кн.: История и культура древней Индии. М., 1990; *Հ ո մ է ր ո ս. Իլիական, թարգմ. Հ. Համբարձումյանի, Երևան, 1955, I, 43–52,* А. В. Г н у н и. К вопросу о сакральном значении некоторых предметов вооружения из погребений эпохи средней бронзы.– Археология, этнология и фольклористика Кавказа. Св. Эчмиадзин, 2003, с. 75.

Աղ. 1



քարաբեկորներից[11]: Ներքին կրոմլեխով օղակված տարածքը լցոնված էր ոչ մեծ քարաբեկորներով: Լիցքը հեռացնելիս հայտնաբերվեցին վաղ միջնադարյան, ինչպես նաև մ. թ. ա. VII–VI դդ. խեցեղենի բեկորներ, ինչը հուշում է, որ նշված ժամանակաշրջաններում կատարվել են դամբարանը թալանելու փորձեր: Այս վարկածի ապացույց կարող է համարվել այն փաստը, որ դամբարանից արևմուտք գտնվող դամբանաբլրի ավերված խցում հաստատագրված են վաղ միջնադարյան քառակող կոթող, հավասարաթև խաչով հարթ սալաքար, ինչպես նաև զարգացած միջնադարին բնորոշ խաչքար:

120 սմ խորության վրա բացվեց խուցը ծածկող հսկայական բազալտե ծածկասալ: Ծածկասալի վրա դրված էր տուֆի ոչ մեծ տձև բեկոր, որի մշակված կողին փորագրված էր խաչ (կենտրոնում՝ շրջանակ): Թեպետ նշված քանդակի ուղղակի զուգահեռները բացակայում են, սակայն խաչապատկերը հաճախ է հանդիպում հին Հայաստանի քանդակագործության մեջ[12]: Նշված զուգահեռները թույլ են տալիս ենթադրել, որ տվյալ իրը դամբարան էր իջեցված հիմնական թաղումը կատարելուց դարեր անց, ամենայն հավանականությամբ, մ. թ. ա. VII–VI դդ.: Այս իրի առկայությունը թույլ է տալիս նաև ենթադրել, որ մ. թ. ա. VII–VI դդ. միջամտությունը կատարվել է բլրի վրա թաղում կատարելու նպատակով, ընդ որում այդ թաղումը լիովին ավերվել է վաղ միջնադարյան շրջանում:

Թաղման ծեսը:

Ծածկասալը հեռացնելուց հետո բացվեց թաղման խուցը: Այն ունի գրեթե քառակուսի հատակագիծ (140 x 130 սմ)՝ փոքր-ինչ ձգված է դեպի հյուսիս[12]: Խցի խորությունը 1 մ է: Խուցն ամփոփված է հիմնականում կավահողային և կրաքարային խառը նստվածքների շերտի մեջ: Նրա արևմտյան ու հյուսիսային պատերը շարված են բազալտի բեկորներից, իսկ հարավայինը և արևելյանը հիմնահողային են: Խուցը լցոնված էր ոչ մեծ քարաբեկորներով, որոնց արանքում պարբերաբար հանդիպում էին մանր եղջերավոր անասունի ոսկորներ, վանակատի բազմաթիվ անմշակ բեկորներ: Հատակին մերձ հողաշերտը խիստ կարծր էր[13]: Դրա առաջացումը կապված է լիցքը կազմող կրաքարերի դարերի ընթացքում լվացվելու և վերջինիս ու ջրամերձ շերտի հարևանության հետ: Խեցեղեն նյութը, հիմնականում տեղադրված էր պատերի երկայնքով՝ կենտրոնանալով արևմտյան պատի տակ: Հյուսիսային պատից 50 սմ արևելք հայտնաբերվեց բրոնզե դաշույն: Ընդհանրապես թաղման

[11] *Նմանատիպ ներքին կրոմլեխներ հաստատագրված են Վերին Նավերի №17, Դաշյուզի №6, Սարիջիի №2/98, Քուրդանլիի №3, 4 և 7 դամբարաններում. տե՛ս Հ. Ս ի մ ո ն յ ա ն. Վերին Նավեր, գիրք Ա, Երևան, 2006, էջ 46,* Т. С. А х у н д о в. Северо-восточный Азербайджан в эпоху энеолита и бронзы. Баку, 1999, с. 112, 146.

[12] *Քառակուսի խուց վկայված է Դաշյուզի -6 և Սարիջինյան 2/98 դամբարաններում. տե՛ս* Т. С. А х у н д о в. *Նշվ. աշխ., էջ 118-119:*

[13] *Վանակատը նույնպես կապվում էր հանդերձյալ աշխարհի պաշտամունքի հետ:*

համալիրներում դա կարող է վկայել ինչպես ննջեցյալի սոցիալական բարձր դիրքի մասին, այնպես էլ ունենալ որոշակի խորհրդանշական իմաստ: Մասնավորապես՝ օրինակ՝ Մայիսյանի №1 և 2 դամբարաններում հայտնաբերված դաշույնները, ըստ Գ. Արեշյանի, նախատեսված էին զոհաբերության համար[14]: Դաշույնը որպես զոհաբերության գործիք հիշատակվում է նաև Ռիգվեդայում և հին հունական ծիսակարգում: Այն սրբագործված էր նաև խեթերի մեջ: Այսպես, Յազիլկայայում հայտնաբերված է դաշույն-աստծու պատկեր[15]: Հատկանշական է, որ Բջնիի դաշույնը հայտնաբերվել է հենց զոհաբերված կենդանիների ոսկորների մոտ: Սա թույլ է տալիս ենթադրել, որ դաշույնը Բջնիում նույնպես ընկալվում էր որպես զոհաբերության ծեսի հետ կապված իր, զոհաբերության գործիք[16]:

Ոսկրաբանական նյութը հայտնաբերված է դամբարանի կենտրոնական և արևելյան հատվածներում: Կենտրոնական հատվածում հայտնաբերված ոսկորները պատկանում են մանր ու խոշոր եղջերավոր անասուններին: Խոյը թաղման համալիրներում կարող էր ունենալ մի քանի գործառույթ. ա) իշխանության խորհրդանիշ[17], բ) արեգակի խորհրդանիշ[18], գ) կարող էր ունենալ նաև պահպանիչ գործառույթ[19], դ) կարող էր կապվել նաև նախնիների պաշտամունքի հետ (հնդկական դիցաբանություն)[20]: Ցուլը կարող էր կապված լինել նաև թաղման ծեսի հետ՝ ունենալով մի շարք գործառույթներ, ինչպես նաև կապվում էր զոհաբերության արարողության հետ[21]:

---

[14] Г. Е. А р е ш я н. Охранные раскопки в Маисяне.– Археологические открытия (*այսուհետև՝* АО) в 1983. М., 1984, с. 494, *Ն ո ւ յ ն ի՝* Маисянские курганы.– АО в 1985. М., 1987, с. 559.

[15] А. Г н у н и. *Նշվ. աշխ.*, с. 76; *Ն ո ւ յ ն ի՝* Опыт анализа погребального инвентаря двух погребений эпохи средней бронзы Армении (на основе данных индийской мифологии).– *ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2003, №2, էջ 80;* И. Г. Ф л и т н е р. История и культура Двуречья. М., 1957, с. 226.

[16] *Հարկ է նշել նաև, որ բրոնզե տեգ էր հայտնաբերվել Դաշտուզի №6 դամբանաբլուրում հայտնաբերված կենդանաբանական նյութի հարևանությամբ. տե՛ս* Т. С. А х у н д о в. *Նշվ. աշխ., էջ 113:*

[17] Ригведа (*այսուհետև՝ Ռվ*), Мандалы I–IV. М., 1989; Ригведа. Избранные гимны. I, 10, 2; VII, 18, 17. М., 1972. *Հղումները կկատարվեն տեքստում:*

[18] *Է. Վ. Խ ա ն զ ա դ յ ա ն. Խոյի պաշտամունքը.– XII հանրապետական նստաշրջան, զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 2002, էջ 4, Ա. Գ ն ո ւ ն ի. Շենգավթյան մշակույթի օջախները և օջախային համալիրները.– ՊԲՀ, 2004, №2, էջ 216:*

[19] *Խեթական ծեսում երդմնագանցին անիծելիս օգտագործում էին այդ կենդանու ճարպը: Պահպանիչ գործառույթը երևան է գալիս նաև հայկական ժողովրդական հեքիաթներում. տե՛ս* О. Р. Г е р н и. Хетты. М., 1984, с. 144–145*; Էմինյան ազգագրական ժողովածու, հ. Բ, Մոսկվա-Վաղարշապատ, 1901, էջ 76, Ա. Գ ն ո ւ ն ի. Շենգավթյան... էջ 216:*

[20] *Ա. Գ ն ո ւ ն ի. Շենգավթյան..., էջ 216,* Э. Н. Т е м к и н, В. Г. Э р м а н. Мифы Древней Индии. М., 1985, с. 80. *Ի դեպ, հարկ է նշել, որ քրդական հեքիաթներում խոյը հաճախ ընկալվում է որպես անդրաշխարհը և կենդանիների աշխարհը միավորող կենդանի. տե՛ս* Курдские народные сказки. М., 1989, с. 49–50.

[21] *Հին հնդկական դիցաբանությունում ցուլն էր աստվածներին կանչում զոհաբերության (ՌՎ, 69, 2): Ցլի հետ էր համեմատվում Ագնի աստվածը, որն աստվածային խոտառ (զոհաբերությունը կարգավորող քուրմ) էր (Ռվ I, 140, 6, VII, 3,3): Զոհաբերության վայրը հաճախ կապվում էր ցլի հետ (Ռվ I, 95, 2): Վերին Նավերի թռեղբ-վանաձորյան մշակույթին պատկանող դամբարանում, խցի արևմտյան անկյունում ելուստ էր՝ ցլի գլխի կերպարանքով (Հ. Ս ի մ ո ն յ ա ն. Պեղումներ Վերին Նավերում.– Հայկական ՍՍՀ-ում 1987-1988 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան (զեկուցումների թեզիսներ), (այսուհետև՝ թեզիսներ), Երևան, 1989, էջ 15: Հին հույները ցլերին զոհաբերում էին անդրաշխարհի տիրակալ Հադեսին. տե՛ս* В е р г и л и й. Энеида. VI, 253. М., 1971. *Թաղման*

Ննջեցյալը պառկած էր մեջքի վրա, արևելյան պատին զուգահեռ, հյուսիս-հարավ կողմնորոշումով, ոտքերը ծալված էին: Թաղվածը 22–27 տարեկան կին էր: Հատկանշական է, որ կմախքը գրեթե ամբողջությամբ պահպանվել էր[22]: Ուշագրավ է, որ թռեղք – -վանաձորյան համալիրներում դիաթաղումը հաճախ չի հանդիպում: Մասնավորապես, դիաթաղման ծեսով են բնորոշվում Լոռի Բերդի № 75, 91, ինչպես նաև Սիսիանի փորձաբարական կայանի դամբարանները[23]: Սակայն ամենամոտ զուգահեռները դիտարկվում են Քյուրդլինյան № 13, Դաշյուզի № 6, Սարիջինյան № 2/98, Խաչբուլաղի № 1 և Թռեղքի XXII դամբարաններում, որտեղ ննջեցյալը պառկած է մեջքի վրա[24]:

Թաղման գույքը:

Մետաղ: *Բջնիի դամբարանից հայտնաբերված միակ մետաղական իրը՝ թույլ արտահայտված կողով, սակայն հստակ արտահայտված ուսերով, սլացիկ շեղբով բրոնզե դաշույնն է: Ուշադրության է արժանի դաշույնի արխաիկ տեսքը: Այն նման է Թռեղքի վաղ բրոնզեդարյան № XL դամբարանից հայտնաբերված դաշույնին (մ. թ. ա. III հազ. վերջ), որն ունի իր զուգահեռները վաղ բրոնզեդարյան բազմաթիվ հնավայրերից (Սաչխերե)[25]: Նշված իրը որոշակիորեն նմանվում է Սիսիանի փորձակայանի մ. թ. ա. XX դ. թվագրվող № 2 դամբարանից գտնված դաշույնին[26]:*

Խեցեղեն: *Դամբարանում հայտնաբերված անոթների առաջին խումբը սև փայլեցված կժերն են: Ա) Զգվող իրանով, փռված շուրթով վարդագույն աստառով սև փայլեցված մակերեսով անոթ (աղ. 2, նկ. 1): Նշված տիպի անոթների ամենամոտ զուգահեռներն են մ. թ. ա. III հազ. վերջով թվագրվող Լճաշենի № 123, Մոզի № 1, 2, ինչպես նաև Արտաշավանի № 5 դամբարաններից գտած իրերը[27]: Բ) Վերին հատվածում կլորացող սև փայլեցված անոթ՝ դարչնագույն աստառով, որն իր զուգահեռներն ունի Լոռի Բերդի*

արարողակարգի նկարագրությամբ Բողազքյոից գտնված սալիկում հիշատակվում է Արեգակի (Երկրի) աստվածուհուն և ննջեցյալին նվիրված ցլի զոհաբերությունը: Օ. Ր. Գ ե ր ն ի. *Նշվ. աշխ., էջ 147:*

[22] *Մարդաբանական նյութի բնորոշումը՝ Ռ. Մկրտչյանի, որին հայտնում ենք խորին շնորհակալություն:*

[23] O. X n k i k y a n. Syunik during the Bronze and Iron Ages. Barrington. 2002, p. 30, 33, 36; *Ս. Դ և է ջ յ ա ն. Լոռի Բերդ II, Երևան, 2003, էջ 42, 80:*

[24] Т. С. А х у н д о в. *Նշվ. աշխ., էջ 121-122;* Э. Г о г а д з е. Периодизация и генезис курганной культуры Триалети. Тбилиси, 1972, таб. 2.

[25] Э. Г о г а д з е. *Նշվ. աշխ., էջ* 100, *աղ.* 12 (3):

[26] O. X n k i k y a n. *Նշվ.աշխ., աղ.* XI (1):

[27] *Նույն տեղում, էջ 23-24, աղ. IV (1,2,15), Հ. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. Լճաշենի նյութական մշակույթի զարգացման հիմնական էտապները.– ՊԲՀ, 1965, № 2, էջ 99-100, աղ. 1 (19), Պ. Ա վ ե տ ի ս յ ա ն, Ն. Ե ն գ ի բ ա ր յ ա ն, Գ. Ս ա ր գ ս յ ա ն. Հայաստանի նորահայտ հնագիտական հուշարձանները (Արտաշավանի դամբարանադաշտ).– «Հանդես ամսօրյա», 1998, թիվ 1-12, էջ 196-197 Աղ. Բ (8), Պ. Ա վ ե տ ի ս յ ա ն. Հայաստանի միջին բրոնզի ժամանակագրությունը և փուլաբաժանումը.– Մեղմագիր պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2003, էջ 14-15, 19-20:*

Աղ. 2



№ 60 դամբարանում (աղ. 2, նկ. 2)[28]: Գ) Գնդաձև իրանով սև փայլեցված անոթ: Ունի բավականաչափ ուշ տեսք և նման է Լոռի բերդի № 77 դամբարանի անոթներին (աղ. 1, նկ. 3)[29], սակայն, նկատի ունենալով դամբարանի անխաթար տեսքը, ավելի տրամաբանական է ենթադրել նշված տիպի ավելի վաղ ակունքները:

Դամբարանային նյութերում վկայված է կորացող իրանով, թեք շուրթով, լայն հատակով թաղար: Դրա ամենամոտ զուգահեռը հայտնի է Լոռի Բերդի № 92 դամբարանից: Վերջինիս նշված թաղումը Ս. Դևեջյանը թվագրում է մ. թ. ա. III–II հազ. սահմանագլխով: Նմանատիպ անոթ հայտնի է նաև Ուզերլիկ-թեփեի ստորին շերտերից (աղ. 3, նկ. 4)[30]:

Բջնիի դամբարանի մյուս թաղարները (աղ. 3, նկ. 1–3, 6, 8) հիմնականում ներկայացնում են կլորացող իրանով, թեք, մեկ դեպքում փռված շուրթով անոթներ: Վերջինս նույնպես իր զուգահեռն ունի Մոզի № 2 դամբարանում, ինչպես նաև Սիսիանի փորձարարական կայանի № 4 դամբարանում: Նշված հուշարձանները թվագրվում են մ. թ. ա. III հազ. վերջով – II հազ. սկզբով[31]: Թաղարներից մեկը նմանվում է Թռեղքի դամբանաբլուրների երկրորդ խմբին պատկանող XXIX դամբարանից հայտնի անոթին[32]: Բջնիի թեքված շուրթով թաղարի զուգահեռներն առկա են նաև Ուզերլիկ-թեփեի ստորին հորիզոնի նյութերում[33]:

Թասերը նեկայացված են կլորացող իրանով աղ. 2, նկ. 4, 6) և թեք շուրթերով (աղ. 2, նկ. 6), ինչպես նաև թեքիրանով թեք ու պրոֆիլավորված շուրթով անոթներով (աղ. 3, նկ. 5): Թեք իրանով և պրոֆիլավորված շուրթով Բջնիի անոթին նման է Սիսիանի փորձարարական կայանի № 13 դամբարանի թասը, որը ժամանակագրորեն անմիջապես հաջորդում է № 4 դամբարանին[34]: Թեք, դուրս ընկած շուրթով անոթն իր ամենամոտ զուգահեռն ունի մ. թ. ա. III–II հազ. սահմանագլխով թվագրվող Լոռի Բերդի № 61 դամբարանում[35]: Բջնիի թասերն իրենց զուգահեռներն ունեն նաև մ. թ. ա. XXII–XIX դդ. թվագրվող Քեթիի № 15 և Լոռի Բերդի № 61 դամբարանների նյութերում[36]: Դամբարանում հայտնաբերված ևս մեկ թաս ունի հարթ շուրթ, լայն հատակ ու կորացող իրան. այն իր զուգահեռներն ունի Քեթիի № 10 և Սիսիանի № 4 դամբարանների նյութերում[37]:

Բջնիի խեցեղենի մեջ աչքի է ընկնում արխաիկ կիսակլոր բռնակով գավը (աղ. 3, նկ. 10): Այս տիպի բռնակները հատուկ են միջին բրոնզի վաղ փուլին և իրենց նմանակներն

---

[28] *Ս. Դ և ե ջ յ ա ն. Նշվ. աշխ. նկ. 74 (2) :*

[29] *Նույն տեղում, էջ 198-199, նկ. 93 (2):,*

[30] *Նույն տեղում, նկ. 108 (8),* К. Х. К у ш н а р е в а. Поселение Узерлик- тепе близ Агдама.– Материалы и исследования по археологиии СССР, т. 67. М., 1959, с. 398.

[31] O. X n k i k y a n. *Նշվ.աշխ., էջ 29-31, աղ. IV (16-17), VIII (11):*

[32] Ранняя и средняя бронза Кавказа.– Археология. М., 1994, с. 92, таб. 22 (46); Э. Г о г а д з е. *Նշվ. աշխ., էջ 104:*

[33] К. Х. К у ш н а р е в а. Севано-узерликская культура эпохи средней бронзы на территории Южного Кавказа.– В кн.: Культурное наследие Востока. М., с. 90–92, рис. 1 (7–8).

[34] O. X n k i k y a n. *Նշվ. աշխ., էջ, 29-31, աղ. X (14):*

[35] *Ս. Դ և ե ջ յ ա ն. նշվ. աշխ., նկ. 78 (5) :*

[36] Л. А. П е т р о с я н. Раскопки памятников Кети и Воскеаска. Ереван, 1989, таб. 41 (1); *Ս. Դ և ե ջ յ ա ն. նշվ. աշխ., էջ 157, նկ. 78 (5), էջ 196, Պ. Ա վ ե տ ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 19*

[37] *Պ. Ա վ ե տ ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 19,* Л. А. П е т р о с я н. *Նշվ. աշխ., աղ. 36 (18),* O. X n k i k y a n. *Նշվ. աշխ., աղ. V (8):*

Աղ. 3



ունեն բեղենյան մշակույթում[38]*: Նման կանթերով զարդարված են Լոռի Բերդի № 1 և № 60 դամբարաններում գտնված անոթները*[39]*:*

Խեցեղենի զարդանախշը:

Ա) Ռելիեֆ զարդանախշ: *Դրանք ներկայացված են կիսալուսնաձև հորիզոնական նախշով (աղ. 3, նկ. 8): Կիսալուսնաձև ռելիեֆ զարդանախշով է զարդարված Լոռի Բերդի № 60 դամբարանի գավը, ինչպես նաև Արտաշավանի № 5 դամբարանի սափորը*[40]*: Հաջորդ զարդանախշը ռելիեֆ ուղղահայաց ժապավենն է (աղ. 3, նկ. 6) և իր ամենամոտ զուգահեռն ունի Ջարջառիսի դամբարանում, որը Հ. Մնացականյանը վկայում է վաղից միջին բրոնզի անցման փուլին*[41] *(հին տերմինաբանությամբ՝ էնեոլիթից՝ վաղ բրոնզ): Ներճկված շրջանակի տեսք ունեցող զարդանախշը (աղ. 3, նկ. 2) հայտնի է նաև Լոռի Բերդի № 60 և № 61 դամբարաններից*[42]*: Ռելիեֆ գնդաձև զարդանախշերը (աղ. 3, նկ. 10) հայտնի են նաև Լոռի Բերդի № 76, 90 դամբարաններից*[43]*: Գնդաձև թաղարի վիզն ու իրանն իրարից զատվում են ռելիեֆ ժապավենով (աղ. 3, նկ. 1): Այս անոթն իր զուգահեռներն ունի Լոռի Բերդի № 74 դամբարանում*[44]*: Ռելիեֆ և ներճկված զարդանախշը միջին բրոնզեդարյան խեցեղենի հատկանշական գծերից մեկն է*[45]*:*

Բ) Փորագիր զարդանախշ: *Նման զարդանախշով են զարդարված մեծ՝ սև փայլեցված սափորը և սև փայլեցված թաղարը: Սափորի զարդանախշը բաղկացած է երկու գոտուց՝ վերին հատվածում թեք գծեր կազմող կետերով, որոնք վերևից ու ներքևից եզերված են փորագիր գծերով: Ստորին գոտին իրենից ներկայացնում է կետազարդ բեկյալ ժապավեն: Այս զարդեղանակը հանդիպում է միջին բրոնզի ամենավաղ փուլերից: Այն հաստատագրված է Թահիրովում Հ. Մնացականյանի պեղած դամբարանում, որը նա թվագրում է վաղից միջին բրոնզի անցման փուլով*[46]*: Նման զարդամոտիվ (սակայն մի փոքր ավելի հարուստ) հանդես է գալիս նաև Լոռի Բերդի № 1, 61, 61-1 , ինչպես նաև Մոզի № 1 և 2, Սարիջիի խմբի № 1, Թռեղքի V դամբարաններում*[47]*: Հաջորդ փորագիր զարդանախշը կազմված է ներգծված եռանկյունիներից, որոնց համար հիմք է ծառայում իրանն ու վիզը զատող ռելիեֆ ժապավենը, իսկ կողային մասերը կատարված են փորագիր անփույթ (3 կամ 4) գծերով: Նմանատիպ զարդեղանակ վկայված է Քյուրդլինյան խմբի № 13 դամբարանում, ինչպես նաև արդեն հիշատակված Ջարջառիսից պեղված անոթում: Այս հանգամանքը թույլ է տալիս վերապահումով մոտենալ Թ. Ահունդովի այն տեսակետին, որ Քյուրդլինյ ան դամբանաբլրի խեցեղեն ողջ զույքն առավել մոտ զուգահեռներն ունի Հյուսիսային Կովկասում*[48]*:*

---

[38] Т. Ф Г о б е д ж и ш в и л и. Бедени–культура курганных погребений. Тбилиси, 1980, таб. XXXI–XXXV.

[39] *Ս. Դ ևեջյան. նշվ. աշխ., էջ 146, նկ. 67 (9), էջ 154, նկ. 75 (11), Պ. Ա վ ե տ ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 19,* R. B a d a l y a n, P. A v e t i s y a n. Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia I Mt. Aragats and Surrounding Region. Oxford, 2007, p. 93–94, pl. IV (1).

[40] *Ս. Դ ևեջյան. նշվ. աշխ., նկ. 75 (11):*

[41] *Հ. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 98, աղ. II (7):*

[42] *Ս. Դ ևեջյան. նշվ. աշխ., նկ. 75 (8), 76 (5):*

[43] *Նույն տեղում, XXX (5), XXXV (9):*

[44] *Նույն տեղում, նկ. 90 (7):*

[45] Э. Г о г а д з е. *Նշվ. աշխ., էջ* 100:

[46] *Հ. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 98, աղ. II (11):*

[47] *Ս. Դ ևեջյան, նշվ. աշխ., նկ. 66 (1), 76 (5), 78 (2), Հ. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 98, աղ. II (11),* Т. А х у н д о в. *Նշվ. աշխ., նկ. L (14),* Э. Г о г а д з е. *Նշվ. աշխ., էջ 95, 97, աղ. 17 (43):*

[48] Т. А х у н д о в. *Նշվ. աշխ., էջ 108, 127, նկ. L (14):*

Այսպիսով, Բջնիի դամբանաբլուրը, այնտեղ ամփոփված հիմնական թաղումը՝ ուղեկցող նյութով հանդերձ, կարելի է թվագրել մ. թ. ա. III հազ. վերջին դարերով:

ДРЕВНЕЙШИЙ БДЖНИ
(Предварительные наблюдения)

ИГИТ ГАРИБЯН, АЙК АКОПЯН, АРТАК ГНУНИ,
ГАГИК ХАЧАТРЯН, ТАТЬЯНА ВАРТАНЕСОВА.

Резюме

Один из известных средневековых армянских городских центров – Бджни известен также многочисленными памятниками, относящимися к дохристианскому периоду. Впервые материалы, относящиеся к III тыс. до н. э., были обнаружены еще в 1928 г. Е. Байбуртяном. В последующие годы во время сельскохозяйственных работ были обнаружены многочисленные материалы, относящиеся к различным периодам эпох бронзы и железа, а также к постурартскому периоду. По мнению ряда исследователей топоним Бджни как Базуния упоминается в летописи Сардури II, датируемой 741 г. до н. э. В 2004–2006 г. экспедиция ЕрГУ обследовала территорию к югу от средневековой крепости на левом берегу р. Раздан. Здесь были обнаружены остатки стен циклопической крепости, а также обширный могильник. Обследованное погребение представляло курган с каменно-земляной насыпью диаметром 9 м и высотой 1 м. Погребальная камера подквадратной формы была окаймлена внутренним кромлехом диаметром 3 м. При раскопках насыпи обнаружено некоторое количество разновременной керамики, однако само погребение было непотревоженным, благодаря громадной плите перекрытия. В погребении были обнаружены кости крупного и мелкого рогатого

скота, керамика, расположенная вдоль стен камеры, и бронзовый кинжал. Человеческие останки принадлежали женщине 22–27 лет. Костяк лежал на спине с согнутыми ногами головой к югу. Анализ погребального инвентаря позволяет датировать бджнийское погребение последними веками III тыс до н. э.

THE ANCIENT BJNI
(Preliminary observations)

IGIT GHARIBYAN, HAYK HAKOBYAN, ARTAK GNUNI,
GAGIK KHACHATRYAN, TATYANA VARTANESOVA

S u m m a r y

One of the famous cities of the medieval Armenia – Bjni is also well-known for its pre-Christian monuments. The first materials of the III mill. B.C. were known from Ye. Bayburtyan's excavations as long ago as 1928. During the following years a lot of materials dated to different periods of Bronze and Iron Ages and post-Urartian period were found. According to some investigators the name of Bjni has been mentioned in the chronicle of Sardoury II (741 B.C.). During 2004–2006 the expedition of the Yerevan State University was investigating the territory to the south from the medieval fortress of Bjni, on the left bank of the river Hrazdan. Here the ruins of walls of the Cyclopean fortress and a large grave-yard were found. The investigated grave was a kurgan with stone-earthen embankment (9 m in diameter and 1 m in height). The grave camera was fringed with the internal cromlech (3 m. in diameter). During the excavations of the embankment some pottery of different periods were found, however the burial was not destroyed or robbed because it had been covered by a very big stone plate. In the burial the bones of a sheep and a bull, a bronze knife and pottery, placed along the walls of the burial, were found. The skeleton belonged to a woman of 22–27. It lay on the back and its head was directed to the south. The analysis of the burial stock lets us date the grave of Bjni to the last centuries of the III mill. B.C.